ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՀՈՒՆԻՍ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ

1 **Վանի աշխարհակալությունը ո՞ր թվականների նվաճումների արդյունքում է ստեղծվել:**

1) Ք. ա. 795–791 թթ.
2) Ք. ա. 781–776 թթ.
3) Ք. ա. 790–786 թթ.
4) Ք. ա. 785–781 թթ.

2 **Ո՞ր տարեթիվն է համարվում Հայոց փոքր թվականի սկիզբը:**

1) 554 թ.
2) 551 թ.
3) 552 թ.
4) 1084 թ.

3 **Ե՞րբ են Երևանի խանի զինված ուժերը ներխուժել Շիրակ և Փամբակ:**

1) 1827 թ. օգոստոսին
2) 1826 թ. հուլիսին
3) 1826 թ. օգոստոսին
4) 1826 թ. սեպտեմբերին

4 **Հայաստանի առաջին հանրապետությունում ե՞րբ է ընդունվել դատական հիմնարկությունների մասին օրենքը:**

1) 1918 թ. դեկտեմբերի 6-ին
2) 1919 թ. հունվարի 31-ին
3) 1918 թ. սեպտեմբերի 18-ին
4) 1919 թ. սեպտեմբերի 2-ին

5 **Հռոմեացի եռապետ Անտոնիոսը 60–հազարանոց զորքով ե՞րբ է արշավել Հայաստան:**

1) Ք. ա. 33 թ.
2) Ք. ա. 35 թ.
3) Ք. ա. 36 թ.
4) Ք. ա. 34 թ.

6 **Խաչակիրների երկու բանակները ե՞րբ են մտել Կիլիկիա և սկսել նրա Դաշտային մասի քաղաքները նվաճել:**

1) 1099 թ.
2) 1096 թ.
3) 1097 թ.
4) 1098 թ.

7 Ալեքսանդրապոլում ե՞րբ է տեղի ունեցել հակացարական ցույցը՝ ի պաշտպանություն Հայ առաքելական եկեղեցու իրավունքների։

1) 1903 թ. հունիսի 30–ին
2) 1904 թ. հոկտեմբերի 17–ին
3) 1903 թ. հուլիսի 29–ին
4) 1903 թ. օգոստոսի 1–ին

8 Ազգային միացյալ կուսակցության հիմնադիրները ո՞ր թվականին են դատապարտվել ազատազրկման։

1) 1969 թ.
2) 1968 թ.
3) 1970 թ.
4) 1974 թ.

9 Վանի թագավորության բանակում ո՞ւմ օրոք է առանձնացվել «արքայական գունդը»։

1) Մենուայի
2) Ռուսա I–ի
3) Իշպուինիի
4) Արգիշտի I–ի

10 Արշակ II–ն ու Կոստանդիոս II–ը ո՞ր քաղաքում են հանդիպել և ամրապնդել հայ–հռոմեական դաշինքը։

1) Կոստանդնուպոլսում
2) Մաժակում
3) Անտիոքում
4) Մծբինում

11 Որքա՞ն է եղել հայ մարտիկների թիվը Զեյթունի 1862 թ. ապստամբության ժամանակ։

1) 4500
2) 5500
3) 6000
4) 5000

12 Մարդասիրական օգնության համար 1922 թ. մայիսի 10-ին ո՞ւմ է շնորհակալական նամակ ուղղել Ալեքսանդր Մյասնիկյանը։

1) Վ. Վիլսոնին
2) Լ. Ջորջին
3) Ու. Հարդինգին
4) Վ. Լենինին

13 **Թվարկվածներից ո՞վ է հավաստիացնում, թե Արտաշատի տեղանքն ընտրել է հռչակավոր զորավար Հաննիբալը։**

1) Պլուտարքոսը
2) Ստրաբոնը
3) Պոլիբիոսը
4) Ապպիանոսը

14 **VII դ. սկզբին ո՞վ էր գլխավորում Սասանյան Պարսկաստանի դեմ հայ ժողովրդի մղած պայքարը Տարոնում։**

1) Դավիթ Սահառունի իշխանը
2) Մժեժ Գնունին
3) Վահան իշխանը
4) Վարազտիրոց Բագրատունին

15 **Որքա՞ն հայկական եկեղեցի և վանք է ավերվել կամ կողոպտվել Մեծ եղեռնի ժամանակ։**

1) 1925
2) 2750
3) 3050
4) 2350

16 **Թվարկվածներից ո՞րը Ալեքսանդր Թամանյանի նախագծով չի կառուցվել։**

1) Երևանի առաջին հէկը
2) Ծիծեռնակաբերդի Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրը
3) հանրային գրադարանի շենքը
4) Խորհրդային Հայաստանի կառավարության տունը

17 **Ո՞ր մարմնի որոշումից է մեջբերված հատվածը։**

«Շարունակել բանակցությունները Հայաստանի կառավարության հետ և չստանձնել ռուսական զորքերի օգնությամբ անմիջապես խորհրդայնացնելու նախաձեռնությունը»։

1) Արևելքի ժողովուրդների առաջին համագումար
2) ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրո
3) ՌՍԴԽՀ արտաքին գործերի ժողկոմ
4) ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրո

18 **Ո՞ր ապստամբության մասնակիցներն են ընդունել հետևյալ վճիռը։**

«Լավ ենք համարում մի անգամ մեռնել, քան թե ամեն օր եկեղեցու և քրիստոնեության արհամարհանքը և քակտումը տեսնել»։

1) 481–484 թթ.
2) 748–750 թթ.
3) 774–775 թթ.
4) 850–855 թթ.

19 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների բոլոր սխալ բացատրությունները ներկայացնող տարբերակը։**

ա. Պատերազմի ժամանակ քաղաքացիներից և գյուղացիներից հավաքագրված զորքը կոչվում էր աշխարհազոր։
բ. Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Տուրուբերանում բյուզանդացիների կազմավորած նահանգը հայտնի է Մասն Մեծ Հայոց անունով։
գ. Ժառանգաբար հորից որդուն անցնող խոշոր մասնավոր հողերը կոչվում էին հայրենիք։
դ. Մեծ Հայքի համար կարևորագույն հարցերը քննարկելու նպատակով մինչև VI դարի երկրորդ կեսը հրավիրվող համաժողովրդական ժողովը կոչվում էր աշխարհաժողով։
ե. Մեծ Հայքի թագավորության սահմանակալ նահանգների տերերը կոչվում էին բդեշխներ։
զ. Թագավորական ոստանի պաշտպանությունն իրականացնող, արքունիքին կից հատուկ հեծյալ ջոկատներից կազմված զորամասը կոչվում էր մաղխազական այրուձի։

1) ա, դ, զ
2) բ, գ, ե
3) ա, բ, ե
4) բ, դ, զ

20 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների բոլոր ճիշտ բացատրությունները ներկայացնող տարբերակը։**

ա. Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի կողմից 2014 թ. մայիսին հիմնադրված կառույցը կոչվում է Եվրասիական տնտեսական միություն։
բ. Հայ–ռուսական պայմանագրի նախագիծը Բաքվում 1920 թ. նոյեմբերի 4–ին քննարկած մարմինը կոչվում էր Ադրբեջանի Ռազմահեղափոխական կոմիտե։
գ. Հայ տրոցկիստների առաջին ելույթը հրապարակվել է «Երեքի դեկլարացիա» անունով։
դ. Գյուղի կոլեկտիվացման ընթացքում իրենց աշխատանքի շնորհիվ կայուն տնտեսություն ստեղծած խավը հայտնի էր կուլակ անվանումով։
ե. Նոր Սահմանադրության նախագծի մշակման նպատակով 1991 թ. նոյեմբերի 15–ին ստեղծված մարմինը կոչվում էր ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողով։

1) ա, դ, ե
2) բ, գ, ե
3) ա, գ
4) բ, դ

21 **Ընտրե՛ք պատմական իրադարձությունների բոլոր սխալ պատճառահետևանքային կապերը ներկայացնող տարբերակը։**

ա. Ջելայի ճակատամարտում Լուկուլլոսի պարտության հետևանքով վերականգնվեց հայկական գերիշխանությունը Եգիպտոսում։
բ. Մագնեսիայի ճակատամարտում պարթևների զորքի պարտությունը նպաստեց Առաջավոր Ասիայի քաղաքական քարտեզի փոփոխմանը։
գ. Ք. ա. 743-713 թթ. մղած պայքարի արդյունքում Ասորեստանը վերականգնեց իր դիրքերը՝ կրկին դառնալով Առաջավոր Ասիայի գերտերություններից մեկը։
դ. Ակցիումի ճակատամարտից հետո հայ–պարթևական միացյալ բանակը մտավ Հայաստան և հռոմեական լեգեոններին դուրս շպրտեց երկրից։
ե. Արտաշատում կնքված հայ-պոնտական պայմանագրով Հայաստանը գործողությունների ազատություն ստացավ արևելքում, հարավում և հյուսիսում։
զ. Արտաշես I–ի հողային բարեփոխումը նպաստեց ավատատիրական հողատիրության զարգացմանը Հին Հայաստանում։

1) ա, բ, զ
2) բ, գ, ե
3) բ, դ, զ
4) ա, գ, ե

22 **Ընտրե՛ք պատմական իրադարձությունների բոլոր իրական պատճառահետևանքային կապերը ներկայացնող տարբերակը:**

ա. 1920 թ. թուրք–հայկական պատերազմում Էրզրումի անկման պատճառը հայ զինվորների բարոյահոգեբանական ու մարտական պատրաստվածության թուլությունն էր:
բ. Հայհեղկոմի 1921 թ. ապրիլի 24-ի դեկրետով Փետրվարյան ապստամբության բոլոր մասնակիցներին, այդ թվում՝ ղեկավարներին, համաներում շնորհվեց:
գ. Հայ–ռուսական հարաբերությունների կտրուկ սրումը ստիպեց ՌՍԴԽՀ և ՀՀ ներկայացուցիչներին 1920 թ. օգոստոսի սկզբին Թիֆլիսում վերսկսել բանակցությունները:
դ. Բաքվի Հայոց ազգային խորհուրդը, կատարելով Բաթումի հայ-թուրքական պայմանագրի պահանջը, լուծարեց Բաքվում գտնվող հայկական զորամասերը:
ե. Ըստ 1920 թ. նոյեմբերի 13–ին Թիֆլիսում ստորագրված հայ–վրացական համաձայնագրի՝ ժամանակավորապես Լոռու չեզոք գոտի մտցվեցին վրացական զորքեր:
զ. 1921 թ. Փարիզում կնքված ֆրանս-թուրքական պայմանագրի արդյունքում հայաթափված Կիլիկիան հանձնվեց Թուրքիային:

1) բ, գ, ե
2) ա, դ, զ
3) բ, դ, ե
4) գ, դ, զ

23 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը:**

ա. Երվանդունի Վահագնի գահակալման սկիզբը
բ. Կյուրոս Կրտսերի ապստամբության սկիզբը
գ. Կամբիզի գահակալման սկիզբը
դ. Հայաստանի կողմից Աքեմենյանների գերիշխանության ճանաչումը
ե. Տիգրան Երվանդյանի գլխավորությամբ Բաբելոնի գրավումը
զ. Աքեմենյան տերության բաժանումը 20 սատրապությունների

1) գ
2) դ
3) ա
4) զ

24 **Հայոց կաթողիկոսների անունները դասավորե՛ք ըստ նրանց գահակալման ժամանակագրական հաջորդականության և գտե՛ք պատասխանի ճիշտ տարբերակը:**

ա. Մեսրոպ Արտազեցի
բ. Ստեփանոս Հռոմկլայեցի
գ. Կոստանդին Լամբրոնացի
դ. Պողոս Սսեցի
ե. Հովհաննես Սսեցի
զ. Կոստանդին Կեսարացի

1) ե, բ, զ, գ, ա, դ
2) բ, ե, գ, զ, դ, ա
3) ե, բ, գ, զ, ա, դ
4) բ, ե, զ, գ, ա, դ

25 **Կատարե՛ք համապատասխանեցում և գտե՛ք պատասխանի ճիշտ տարբերակը:**

ա. Կլեոպատրա	1. Տրդատ Մեծի կինը
բ. Էրատո	2. Արշակ III-ի կինը
գ. Խոսրովիդուխտ	3. Արտաշեսյան արքայատոհմի վերջին թագուհի
դ. Աշխեն	4. Տիգրան Մեծի կինը
ե. Վարազդուխտ	5. Տրդատ Մեծի քույրը
	6. Արշակ II-ի կինը

1) ա–6, բ–4, գ–3, դ–2, ե–5
2) ա–4, բ–3, գ–5, դ–1, ե–2
3) ա–6, բ–3, գ–5, դ–4, ե–2
4) ա–4, բ–3, գ–2, դ–1, ե–5

26 **Կատարե՛ք համապատասխանեցում և գտե՛ք պատասխանի ճիշտ տարբերակը:**

Թվաքանակ

1. 60 000
2. 15 000
3. 180 000
4. 40 000
5. 250 000

Փաստ

ա. ՀՍԽՀ-ում հողազուրկ գյուղացիների թիվը 1929 թ. դրությամբ
բ. Սպիտակի երկրաշարժի ժամանակ վիրավորված մարդկանց թիվը
գ. 1930-ական թթ. Հայաստանում բռնությունների ենթարկված մարդկանց թիվը
դ. Խորհրդային Հայաստանի կոլտնտեսություններում ընդգրկված գյուղացիական տնտեսությունների թիվը 1930–ական թթ. վերջին
ե. Լենինականի բնակչության թիվը Սպիտակի երկրաշարժի ժամանակ
զ. Հայկական ազգային դիվիզիաների կազմում Հայրենական մեծ պատերազմին մասնակցած հայ զինվորների թիվը

1) 1–զ, 2–գ, 3–դ, 4–ա, 5–ե
2) 1–դ, 2–բ, 3–զ, 4–ե, 5–ա
3) 1–զ, 2–գ, 3–բ, 4–ա, 5–ե
4) 1–զ, 2–բ, 3–դ, 4–ե, 5–ա

27 **Ընտրե՛ք բոլոր սխալ պնդումները ներկայացնող տարբերակը:**

ա. Տարբեր վայրերում ձևավորված գաղտնի խմբակներն ու կազմակերպությունները հող նախապատրաստեցին հայ ազգային կուսակցությունների ձևավորման համար:
բ. ՀՍՌԿ հայացքներում առանձնակի տեղ ուներ սոցիալիզմի գաղափարը, որին հասնելու միջոցը նրանք համարում էին գյուղական համայնքը:
գ. Նորաստեղծ «Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցության կորիզը Սիմոն Զավարյանի գլխավորած «Դրոշակ» խմբավորումն է եղել:
դ. «Սև խաչ» կազմակերպությանն աջակցում էր Վանի ռուսական փոխհյուպատոս, հայազգի Կոստանդին Կամսարականը:
ե. ՀՅԴ 1892 թ. տպագրված ծրագրի «Միջոցներ» բաժնում նախատեսվել էր ժողովրդի զինում, մարտական խմբերի ձևավորում, ապստամբական և ահաբեկչական գործողությունների իրականացում:
զ. Ժնևի համալսարանի մի խումբ արևելահայ ուսանողներ հիմնեցին երկրորդ հայ ազգային կուսակցությունը և, հետևելով ռուս հեղափոխական Ա. Գերցենի «Կոլոկոլ» թերթի օրինակին, իրենց պաշտոնաթերթը կոչեցին «Հնչակ»:

1) բ, գ, ե
2) գ, դ, զ
3) ա, դ, ե
4) բ, գ, զ

28 Նիկոլայ II-ը ե՞րբ է պաշտոնապես պատերազմ հայտարարել Օսմանյան կայսրությանը։

1) 1914 թ. նոյեմբերի 1–ին
2) 1914 թ. հոկտեմբերի 21–ին
3) 1914 թ. օգոստոսի 30–ին
4) 1914 թ. սեպտեմբերի 5–ին

29 Ե՞րբ է անցկացվել բարեփոխված ԽՍՀՄ–ի պահպանման վերաբերյալ հանրաքվեն։

1) 1990 թ. մարտի 27–ին
2) 1991 թ. մայիսի 25–ին
3) 1990 թ. օգոստոսի 20–ին
4) 1991 թ. մարտի 17–ին

30 Որքա՞ն հայ է զոհվել Կ. Պոլսում 1896 թ. օգոստոսի երկրորդ կեսին տեղի ունեցած ջարդերի ժամանակ։

1) 18 000
2) 20 000
3) 8000
4) 10 000

31 Հայ հոգևորականության ներկայացուցիչները ո՞ր կաթողիկոսին էին դիմել կաթողիկոսական աթոռը Սսից Էջմիածին փոխադրելու առաջարկով։

1) Կիրակոս
2) Հովհաննես
3) Գրիգոր
4) Ստեփանոս

32 Ե՞րբ է ընդունվել այն կոչը, որից մի հատված ներկայացված է ստորև։

«Ժողովուրդը ոտքի է կանգնել և իր հազարավոր զավակներին մղում է ռազմի դաշտ. . . . Վերջին պատերազմական և քաղաքական անցքերը որոշ լքում, ոգու անկում էին առաջացրել։ Այսօր այդ հիվանդությունը բուժվում է, հին խիզախությունը վերածնվում է, և այդ փրկության միակ իրական ելքն է մեր դժվարին պայմաններում և ժամանակներում. . . . »։

1) 1918 թ. մայիսի 30–ին
2) 1920 թ. սեպտեմբերի 23–ին
3) 1918 թ. մայիսի 25–ին
4) 1920 թ. հոկտեմբերի 30–ին

33 **Ո՞ր պատմիչն է մեջբերված խոսքի հեղինակը:**

«… Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները՝ հույների և հռոմայեցիների մեջ»:

1) Ապպիանոսը
2) Արիանոսը
3) Տակիտոսը
4) Ամմիանոսը

34 **Ե՞րբ է ասվել հետևյալ խոսքը:**

Խոսելով «Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերի» մասին՝ նա ասել է. «Մենք հաստատակամորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, որը կենսական նշանակություն ունի ամբողջ հայ ժողովրդի հետագա զարգացման համար»:

1) 1945 թ. հուլիսի 23–ին
2) 1988 թ. ապրիլի 24–ին
3) 1946 թ. փետրվարի 1–ին
4) 1965 թ. ապրիլի 24–ին

35 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները:**

1. Հայոց ծագումնաբանության նոր տեսության համաձայն՝ Հայկ նահապետի հայրը Թորգոմ նահապետն էր. վերջինիս անունից էլ, ըստ Աստվածաշնչի, առաջացել է Թեգարամա երկրի անվանումը:
2. Անտիոքոս II Երվանդունու թագը հայտնի է «Տիգրանյան» կամ «Հայկյան» անունով:
3. Փոքր Ասիայի արևելյան, Միջագետքի հյուսիսարևմտյան, Իրանական սարահարթի հյուսիսարևելյան շրջանները և Հայկական լեռնաշխարհն ընդգրկող տարածքը հայտնի է «հնդեվրոպական նախահայրենիք» անունով:
4. Արտաշես I արքային մեծարել են տիտղոսներով, որոնք հայտնի են «Բարեպաշտ», «Բարի», «Աշխարհակալ» անուններով, իսկ նա դեռ իր կենդանության օրոք աստվածացվել է:
5. Հայկազուն Երվանդյանների ստեղծած համահայկական երրորդ թագավորությունը նույնպես հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր:
6. Ռուսա II-ի ջանքերով Կոմմագենեում հաստատված կիմերների անվամբ էլ այդ տարածքը միջնադարյան հայկական աղբյուրներում կոչվում է Գամիրք:

36 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները:**

1. ԼՂԻՄ մարզխորհրդի 1988 թ. փետրվարի 22–ին հրավիրված արտահերթ նստաշրջանի օրակարգում դրված հարցը վերնագրված էր՝ «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մարզային խորհրդի միջնորդությունը՝ մարզը Ադրբեջանական ԽՍՀ–ի կազմից հանելու և Հայկական ԽՍՀ–ի կազմի մեջ մտցնելու մասին»:
2. ԽՍՀՄ–ում 1920–ական թվականների կեսերին հաստատված համակարգը հայտնի է ամբողջատիրական անունով:
3. Արցախցիների ազատագրական պայքարը գլխավորող նոր մարմինը, որը ստեղծվեց 1989 թ. օգոստոսի 16-ին և որի որոշումները պարտադիր էին Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածքում, կոչվում էր Ազգային խորհուրդ:
4. Երևանում 1924 թ. փետրվարին գումարված համաժողովը, որտեղ ՀՅԴ-ն հանդես եկավ Հայաստանում իր կազմակերպության վերացման մասին հայտարարությամբ, հայտնի է «ինքնավերացման համագումար» անունով:
5. Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանում 1989 թ. դեկտեմբերի 1–ին ընդունված համատեղ որոշումը հայտնի է «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» անունով:
6. Երևանում վերակառուցման շրջանում տեղի ունեցած հանրահավաքների վայր Թատերական հրապարակն այժմ կոչվում է Անկախության հրապարակ:

37 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառահետևանքային կապեր:**

1. Տրդատ Մեծը Հայ եկեղեցուն տնտեսապես ապահովելու նպատակով գյուղական եկեղեցիների քահանաներին բոլոր ագարակ տեղերում տվել է չորսական, իսկ ավաններում յոթական ծխի հողաբաժին:
2. Արիստակես կաթողիկոսը հանդիմանեց բազմաթիվ անօրեն գործողություններով հայտնի Աղձնիքի վերակացու Արքեղայոսին, ինչի պատճառով նենգորեն սպանվեց:
3. Վասակ Մամիկոնյանը 60-հազարանոց զորքով պարսից զորքի նկատմամբ տարած հաղթանակի շնորհիվ ազատեց հայոց թագավորների ոսկորները գերեվարությունից և դրանք վերաթաղեց Արձնի գյուղում:
4. Արշակավանի կառուցումը առաջացրեց այն նախարարների հավանությունը, որոնց կալվածքներից փախած ավանդառուները, պարտապանները, շինականներն ու ծառաները ազատորեն բնակություն էին հաստատում այդ քաղաքում:
5. Պապի վարած անկախ քաղաքականության արդյունքում Հայաստանից վտարվեցին բյուզանդական զորքերը:
6. Սահակ Պարթևի ջանքերի շնորհիվ Վռամ IV արքան համաձայնվեց, որ Կամսարականները և Ամատունիները նորից տեր դառնան պարսից արքունիքի կողմից բռնազավթված իրենց տոհմական տիրույթներին:

38 **Իրադարձությունների տրված արդյունքներից որո՞նք են ճիշտ:**

1. Գեորգիևսկի դաշնագրով Վրաստանը բռնակցվեց Ռուսաստանին:
2. Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանին անցան նաև Գանձակը, Ղարաբաղը, Շիրակը, Լոռին, Փամբակը, Շամշադինը:
3. Սան Ստեֆանոյի պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանին անցան նաև Կաղզվանը, Օլթին, Էրզրումը, Բայազետը:
4. Բուխարեստի պայմանագրով Ռուսաստանը ձեռք բերեց Բեսարաբիան:
5. Թուրքմենչայի և Ադրիանուպոլսի պայմանագրերի արդյունքում մոտ 110 հազար հայեր վերաբնակվեցին Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացված տարածքներում:
6. Արևելյան պատերազմի արդյունք էր Կարսի մարզի ձևավորումը:

39 **Ընտրե՛ք ճիշտ պնդումները:**

1. Հայաստանի տարածքում Ք. ա. 830–ական թթ. ձևավորվել էին մի քանի համադաշնություններ, որոնցից Նաիրիի շուրջ կազմվածը ամենամեծն էր:
2. Հայկական լեռնաշխարհում Ք. ա. XXIII-XXII դարերում գոյություն է ունեցել 17 երկրներից կազմված դաշինք:
3. Արամեական այբուբենը, ինչպես և պահլավականն ու ասորականը, կազմված էր 22 տառից:
4. Բակուր Արշակունի արքային հռոմեացիները 164 թ. գահընկեց արեցին և տարան Հռոմ:
5. Շապուհ II Երկարակյացի որդի Որմիզդ-Արտաշիրը 26 տարի կառավարել է Հայաստանում:

40 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ:**

1. IV դարում իմաստասիրությամբ զբաղվել է նշանավոր ճարտասան և մանկավարժ Պարույր Հայկազնը:
2. Անանիա Շիրակացու կազմած թվաբանության դասագիրքը աշխարհում հնագույնների շարքին է պատկանում:
3. Պատմահոր «Պատմութիւն Հայոց» աշխատության երրորդ գիրքը վերնագրված է «Ողբ». այդ գրքի պատմական դեմքերն են IV-V դարերի ազգային գործիչները:
4. Պահպանված հայկական առաջին մանրանկարները (VI–VII դդ.) չորսն են, դրանք ներմուծված են «Էջմիածնի Ավետարանի» (989 թ.) ձեռագրի վերջում:
5. Դավիթ Անհաղթը կատարել է գիտությունների դասակարգում՝ ըստ բնագիտության, թվաբանության և աստվածաբանության:
6. Մովսես Կաղանկատվացին իր «Համառօտ պատմութիւն Աղուանից» երկում մանրամասն տեղեկություններ է հաղորդում արաբական նվաճումների մասին:

41 **Ո՞ր իրադարձությունն է խախտում տրված շարքի ժամանակագրական ճիշտ հաջորդականությունը:**

1. Կ. Պոլիսը գրավելու նպատակով անգլո-ֆրանսիական ռազմական ուժերի իրականացրած Դարդանելի գործողության սկիզբը
2. Դիլմանի ճակատամարտը
3. Արամ Մանուկյանի նշանակվելը Վանի նահանգապետ
4. երիտթուրքերի կառավարությանը պատասխանատվության կանչելու մասին Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի հանդես գալը համատեղ հայտարարությամբ
5. Խեչոյի և իր հեծյալների մուտքը Վան
6. Դրոյի կամավորական ջոկատի մուտքը Շատախի կենտրոն Թաղ

42 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1. 409–րդ հրաձգային դիվիզիայի կազմացրումը
2. ԽՍՀՄ կառավարության կողմից 1925 թ. խորհրդա–թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագիրը դենոնսացիայի ենթարկելը
3. Լազր Չափչախյանին ԽՍՀՄ հերոսի կոչում շնորհելը
4. Համո Օհանջանյանի դիմելը Ստալինին, Թրումանին և Չերչիլին՝ հայ ժողովրդին հուզող հարցը լուծելու խնդրանքով
5. գնդապետ Սիմոն Զաքյանի զոհվելը

43 **Կատարե՛ք համապատասխանեցում:**

Ա. Կոստաս կայսեր կողմից հայոց իշխան ճանաչվելը
Բ. Բուղայի 15 000-անոց զորքի դեմ իր 900 ռազմիկներով կռվելը
Գ. Տարոն ներխուժած արաբական ջոկատին ջախջախելը և ամրանալը Արտագերս ամրոցում
Դ. Խոսրով II-ի գումարած Տիզբոնի ժողովին մասնակցելը
Ե. Նկան ամրոցում նրա գլխավորությամբ հայերի ամրանալը և հերոսաբար դիմադրելը արաբներին

1. Արտավազդ Մամիկոնյան
2. Աշոտ Արծրունի
3. Մուշեղ Մամիկոնյան
4. Համազասպ Մամիկոնյան
5. Գուրգեն Արծրունի
6. Սմբատ Բագրատունի

Ա	Բ	Գ	Դ	Ե

44 **Հեղինակի անունը համապատասխանեցրե՛ք իր ստեղծագործության անվանը:**

Ա. «Դեպի Արագած տանող ճանապարհը»
Բ. «Գրիգոր Լուսավորչի տեսիլքը»
Գ. «Նավերի բեռնումը»
Դ. «Կոմիտասի վերջին գիշերը»
Ե. «Շամիրամն Արա Գեղեցիկի դիակի մոտ»

1. Սարգիս Մուրադյան
2. Գևորգ Բաշինջաղյան
3. Վարդգես Սուրենյանց
4. Հովհաննես Այվազովսկի
5. Երվանդ Ոսկան
6. Եղիշե Թադևոսյան

Ա	Բ	Գ	Դ	Ե

45 **Տրված վեց պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:**

1. 1999 թ. մայիսի 30-ի խորհրդարանական ընտրությունների նախընտրական շրջանում ձևավորվել էր «Միասնություն» դաշինքը, որի մեջ էին մտնում Հայաստանի հանրապետական կուսակցությունը, Հայաստանի ժողովրդական կուսակցությունը և Երկրապահ-կամավորականների միությունը:
2. 1990 թ. մայիսի 20-ին տեղի ունեցած ժողովրդավարական և այլընտրանքային ընտրություններով ձևավորվեց Հայաստանի բազմակուսակցական բարձրագույն օրենսդիր մարմինը, որը երեք տարի անց վերանվանվեց Ազգային ժողով:
3. Հայ ազգային կոնգրեսը ձևավորվել է 2008 թ. օգոստոսին հանրապետության ընդդիմադիր դաշտի մի խումբ կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների միավորման արդյունքում:
4. Հայաստանի ՆԳՄ (ՆԳՆ) կառույցում 1990 թ. սեպտեմբերին ստեղծվել է Հատուկ գունդ, որը հանրապետության տարբեր շրջաններում ուներ կազմավորված 26 վաշտ:
5. 2015 թ. ապրիլի 24–ին ընդունվել է համազգային նշանակության մի փաստաթուղթ՝ «Հայոց ցեղասպանության 100–րդ տարելիցի համահայկական հռչակագիրը»:
6. ՀՀԿ–ն, ՀՅԴ–ն ու ԲՀԿ-ն 2003 թ. մայիսի 25–ին կայացած Ազգային ժողովի ընտրություններից հետո կազմել են քաղաքական կոալիցիա և համատեղ ձևավորել կառավարություն, վարչապետ է նշանակվել Անդրանիկ Մարգարյանը:

Բ ՄԱԿԱՐԴԱԿ

46 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների բոլոր ճիշտ բացատրությունները ներկայացնող տարբերակը։**

ա. Արմինիա վարչաքաղաքական միավորի կառավարիչը կոչվում էր ոստիկանապետ։
բ. Վաղ շրջանի քրիստոնեական պաշտամունքային շինությունները հայտնի են բազիլիկ տաճարներ անունով։
գ. Իկոնիայի սուլթանի անձնական գվարդիայում ծառայող գնված ստրուկներին կոչում էին մամլուքներ։
դ. Բագրատունիներին ենթակա առաջին թագավորությունը հայտնի է Վանանդի կամ Կարսի թագավորություն անունով։
ե. Զորահրամանատարներ նշանակված մելիքական տոհմի կրտսեր ներկայացուցիչները կոչվում էին բեկ, հազարապետ, յուզբաշի։
զ. Ազդեցիկ իշխանավորների և բարձր հոգևորականների պալատները կառուցվում էին քաղաքի այն թաղամասում, որը կոչվում էր շահաստան. այդտեղ էին կենտրոնացված նաև հարուստ վաճառականների շենքերը, շուկաները, հյուրանոցները և այլն։
է. Արդեն IX դարում վանական և տաճարային դպրոցների հիման վրա ձևավորվում էին նոր տիպի դպրոցներ, որոնք կոչվեցին վարդապետարաններ։

1) բ, գ, ե
2) գ, դ, զ
3) բ, ե, է
4) ա, զ, է

47 **Գտե՛ք տերմինների կամ հասկացությունների բոլոր սխալ բացատրությունները ներկայացնող տարբերակը։**

ա. Հայկական հարցի լուծմանը նպաստելու համար Թիֆլիսում 1912 թ. հոկտեմբերին ստեղծված մարմինը կոչվում էր Ազգային պատվիրակություն։
բ. Հակահամիդյան շարժման մեջ ազդեցիկ դիրք ունեցող կազմակերպությունը, որը ստեղծվել էր 1889 թվականին, կոչվում էր «Միություն և առաջադիմություն»։
գ. Հայկական I–IV կամավորական ջոկատներից Վարդանի գլխավորությամբ ստեղծված միացյալ զորախումբը կոչվում էր Արարատյան գունդ։
դ. Քրդական հակակառավարական ջոկատները հայտնի էին «չելլոներ» անունով։
ե. Մեծ Թուրան ստեղծելու պանթյուրքական ծրագիրը պետք է իրագործվեր երեք փուլով, որոնցից երկրորդը կոչվում էր օղուզական պետության ստեղծման փուլ։
զ. Սասունին օգնության հասած Թորգոմի ձիավոր խումբը կոչվում էր «Մրրիկ»։
է. Հովսեփ Արղությանի ղեկավարած մարմինը կոչվում էր Հայոց ազգային խորհրդի գործադիր կամ կարգադրիչ մարմին։

1) ա, գ, է
2) բ, ե, զ
3) ա, դ, ե
4) գ, ե, է

48 **Թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից կամ հետևանքներից որո՞նք են ճիշտ:**

ա. Խառանի ճակատամարտից հետո հայ–պարթևական ուժերը մտան Հայաստան և արդյունավետ պայքար մղեցին հռոմեացիների դեմ:
բ. Եռանդ կոչվող վայրում տեղի ունեցած ճակատամարտում հռոմեացիների պարտությունը նպաստեց Հայաստանի նկատմամբ Ներոն կայսեր դիրքորոշման փոփոխմանը:
գ. Հայոց արքա Վաղարշ I–ի որդեգրած ճիշտ քաղաքական դիրքորոշման արդյունքում Հայաստանից հեռացվեցին հռոմեական լեգեոնները:
դ. Ք. ա. 93 թ. սկսված հռոմեա–պարթևական բանակցությունների արդյունքում նրանց միջև ազդեցության ոլորտների բաժանման մասին համաձայնագիր կնքվեց:
ե. Խաբեության շնորհիվ Կարակալլա կայսրը Ասորիքում ձերբակալեց Մեծ Հայքի արքա Խոսրով I–ին:
զ. 226 թ. Սասանյանների իշխանության գալը թուլացրեց Արշակունիների դիրքերը Հայաստանում:
է. Օգոստոս կայսեր հեռագնա ծրագիրը նպատակ ուներ միավորելու Հայաստանը Աղվանքի հետ և ստեղծելու միացյալ ուժեղ պետություն ընդդեմ Պարթևստանի:
ը. Վրաց Փարսման թագավորը սպանեց իր որդի Հռադամիզդին, որպեսզի հռոմեացիներին ցույց տա իր հավատարմությունը:

1) ա, դ, զ, ը
2) բ, դ, ե, է
3) ա, գ, դ, ե
4) բ, ե, զ, ը

49 **Ընտրե՛ք բոլոր սխալ պատասխանները ներկայացնող տարբերակը:**

Որո՞նք էին Մայիսյան ապստամբության պարտության պատճառները:

ա. Բոլշևիկները Երևանում ապստամբություն չէին նախատեսել:
բ. Հաղթանակի համար երկրում չկային լուրջ նախադրյալներ:
գ. Ապստամբությունը կրում էր լայնածավալ և զանգվածային բնույթ, որի պատճառով բոլշևիկները չկարողացան այն ղեկավարել:
դ. Ապստամբության հաջողությունը ի սկզբանե կապվում էր ներքին գործոնների հետ:
ե. Կառավարությունն առանց զենքի դիմելու համոզեց ապստամբների Ալեքսանդրապոլի ղեկավարներին հանձնվել:
զ. Բոլշևիկները չկարողացան ինչպես հարկն է օգտագործել հասարակական բոլոր կազմակերպությունների աջակցությունը:
է. Ապստամբության կենտրոնի պարտությունը կանխորոշեց նրա անհաջողությունը:

1) բ, գ, է
2) գ, դ, զ
3) բ, ե, զ
4) ա, դ, ե

50 **Թվարկված քաղաքներից ո՞րն է հիմնադրվել վեցերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության:**

ա. Վաղարշապատ
բ. Արշամաշատ
գ. Մծուրք
դ. Էրեբունի
ե. Տիգրանակերտ
զ. Զարիշատ
է. Մենուախինիլի
ը. Բագարան
թ. Սամոսատ
ժ. Տուշպա

1) ը
2) բ
3) թ
4) զ

51 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը:**

ա. Սասունի հերոսամարտը՝ Մեծն Մուրադի ընդհանուր ղեկավարությամբ
բ. «Հայասեր–ազգասեր» խմբակի ձևավորումը
գ. «Խարիսխ» զինագործական արհեստանոցի հիմնադրումը Թավրիզում
դ. Բարձր դռան հատուկ հրամանով «Հայոց պատմություն» առարկայի հանվելը հայկական դպրոցների ծրագրերից
ե. Արաբոյի մտնելը ՀՅԴ շարքերը
զ. Մարկոս Թաշճյանի զոհվելը
է. «Հայրենասերների միության» գործունեության դադարեցումը
ը. «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության անդամների դատավարությունը
թ. Գում Գափուի ցույցը
ժ. «Բարենպատակ ընկերության» գործունեության դադարեցումը

1) գ
2) է
3) թ
4) ե

52 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը:**

ա. ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը
բ. ԱՊՀ-ի ստեղծման մասին հայտարարելը Բելովեժյան արգելանոց-անտառում
գ. Ադրբեջանի Գերագույն խորհրդի կողմից անկախության վերականգնման մասին հռչակագրի ընդունումը
դ. ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի մասին հատուկ որոշման ընդունումը
ե. Անկախ հայկական պետության՝ ԼՂՀ-ի հռչակման մասին որոշման ընդունումը
զ. Լաչինի ազատագրումը հայկական ուժերի կողմից
է. Անկախության հանրաքվեի անցկացումը ԼՂՀ-ում
ը. Մոնթեի զոհվելը
թ. «Հարսանիք լեռներում» գործողության սկիզբը
ժ. ԼՂՀ պետական դրոշի հաստատումը

1) է
2) դ
3) բ
4) թ

53 **Կատարե՛ք համապատասխանեցում և ընտրե՛ք պատասխանի ճիշտ տարբերակը:**

ա. «Հավիտենական» կոչված հաշտության կնքումը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև
բ. Սուրեն մարզպանի սպանվելը
գ. Քաղիսիայի ճակատամարտը
դ. Բաբգեն Ա-ի կողմից եկեղեցական ժողովի գումարումը Դվինում
ե. Յարմուքի ճակատամարտը
զ. Մավրիկիոս կայսեր գահակալման ավարտը
է. Չորրորդ տիեզերական ժողովի գումարումը Քաղկեդոնում
ը. Խոսրով Անուշիրվանի գահակալման ավարտը
թ. Հուստինիանոս I կայսեր գահակալման ավարտը

1. 554 թ.
2. 637 թ.
3. 532 թ.
4. 451 թ.
5. 565 թ.
6. 602 թ.
7. 578 թ.
8. 506 թ.
9. 636 թ.
10. 572 թ.

1) ա–3, բ–10, գ–2, դ–8, ե–9, զ–6, է–4, ը–7, թ–5
2) ա–4, բ–5, գ–9, դ–10, ե–2, զ–3, է–6, ը–1, թ–7
3) ա–3, բ–10, գ–9, դ–1, ե–2, զ–6, է–4, ը–7, թ–5
4) ա–6, բ–5, գ–2, դ–8, ե–9, զ–3, է–4, ը–1, թ–7

54 **Թվարկվածներից որո՞նք են տեղ գտել Հայաստանի ազատագրության Հյուսիսային ծրագրում:**

ա. Հայաստանին տրամադրվելու էր նավահանգիստ Սև ծովի ափին:
բ. Նախկին հողատերերին վերադարձվելու էին իրենց կալվածքները, սակայն առանց գյուղացիներին ճորտացնելու իրավունքի:
գ. Արցախի մելիքներից մեկը պետք է դառնար Հայաստանի թագավոր:
դ. Հայոց թագավորն ընտրվելու էր ռուսական կայսրի կողմից, իսկ այնուհետև պետք է օծվեր Էջմիածնում:
ե. Հայաստանի կառավարությունը Մոսկվայում պետք է ունենար իր դեսպանը:
զ. Հայաստանի կառավարությունը պետք է ղեկավարեր ազգությամբ հայ նախարարը:
է. Հայաստանի և Ռուսաստանի միջև առաջարկվում էր կնքել առևտրային պայմանագիր:
ը. Անհրաժեշտ էր համարվում Հայաստանում 20 տարի ժամկետով տեղակայել վեցհազարանոց ռուսական զորք:

1) բ, զ, է
2) ա, դ, ը
3) բ, դ, է
4) գ, ե, ը

55 **Ընտրե՛ք բոլոր ճիշտ պնդումները ներկայացնող տարբերակը:**

ա. Վանի թագավորության դիցարանը կազմված էր 35 աստվածներից և 35 աստվածուհիներից. այսինքն՝ դրանում արտահայտված էր մենամուսնական ընտանիքի գաղափարը:
բ. Մեծ Հայքի 15 աշխարհները միասին ունեցել են 191 գավառ, որից 30–ը Այրարատ նահանգում էր, իսկ 27–ը՝ Վասպուրական:
գ. Մինչև քրիստոնեության պետական կրոն հռչակվելը Հայաստանում արդեն արգելվել էր հայկական մեհենագրության գործածությունը:
դ. Հելլենիստական դարաշրջանի առաջին փուլում Հայաստանում մեծ տարածում է գտնում նաև զրադաշտականությունը, որը դուալիստական կրոն էր և ընդունում էր երկու գերագույն՝ բարի և չար աստվածների համազոր գոյությունը:
ե. ՀՀ–ի բարձրությամբ երկրորդ լեռնագագաթ Կապուտջուղն ունի 3906 մ բարձրություն:
զ. Հելլենիստական մշակույթը և հունարենը լայն տարածում գտան հայոց արքունիքում, ավագանու շրջանում և հասարակ ժողովրդի մեջ:
է. Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում շարունակեցին գոյատևել կրոնական վաղագույն ըմբռնումները՝ բնապաշտությունը, հմայական մոգությունը, ոգեպաշտությունը:

1) բ, դ, է
2) ա, դ, ե
3) բ, գ, զ
4) ա, ե, է

56 **Թվարկվածներից որո՞նք են ճիշտ բնութագրում Բագրատունյաց Հայաստանի պետական կառավարման համակարգը:**

ա. Հայաստանը տարբեր թագավորություններից և իշխանություններից կազմված յուրահատուկ համադաշնություն էր՝ Անիի Բագրատունիների գլխավորությամբ:
բ. Բագրատունի թագավորը ինքնակալ միապետ չէր. նրա իրավունքները սահմանափակված էին եկեղեցական ժողովի կողմից:
գ. Բագրատունի թագավորը կարող էր խորհրդակցել իշխանաց իշխանի, հայր մարդպետի, կաթողիկոսի և սպարապետի հետ:
դ. Պատերազմների ժամանակ մանր թագավորությունների զորքերը ինքնուրույն էին գործում. նրանք չէին ենթարկվում հայոց սպարապետին:
ե. Թագավորական գահը ժառանգում էր միայն ավագ որդին:
զ. Իշխանաց իշխանին ենթարկվում էին արքայական կալվածքները տնօրինողները, պետական գանձարանը, երկրի մեծ ու փոքր պաշտոնյաները:
է. Մշտական բանակը պատերազմների ժամանակ համալրվում էր, և բանակի թվակազմը հասնում էր 90-100 հազարի:

1) ա, գ, է
2) գ, դ, ե
3) ա, զ, է
4) բ, ե, զ

57 **Պաշտոնները համապատասխանեցրե՛ք գործիչների անուններին և ընտրե՛ք պատասխանի ճիշտ տարբերակը:**

1. Թ. Նազարբեկյան
2. Հ. Քաջազնունի
3. Ն. Աղբալյան
4. Ա. Սահակյան
5. Դ. Կանայան
6. Գ. Պետրոսյան
7. Հ. Օհանջանյան
8. Զ. Զորյան

ա. Առաջին հանրապետության արդարադատության նախարար
բ. Ախալցխայի քաղաքապետ և Հայոց ազգային խորհրդի նախագահ
գ. Տրապիզոնի թուրք-անդրկովկասյան բանակցություններում Անդրկովկասյան Սեյմի պատվիրակության անդամ
դ. Առաջին հանրապետության բանակի սպարապետ
ե. Հայաստանի խորհրդի նախագահ
զ. Անդրկովկասյան կոմիսարիատի կոմիսար
է. ՀՍԽՀ Կարմիր բանակի հրամանատար
ը. Առաջին հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարար
թ. Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար

1) 1–թ, 2–զ, 3–ա, 4–ե, 5–է, 6–ը, 7–գ, 8–բ
2) 1–դ, 2–գ, 3–ը, 4–ե, 5–թ, 6–ա, 7–բ, 8–զ
3) 1–է, 2–զ, 3–գ, 4–բ, 5–դ, 6–ը, 7–ե, 8–ա
4) 1–դ, 2–գ, 3–ը, 4–ե, 5–է, 6–ա, 7–զ, 8–բ

58 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները:**

1. Հռոմեական կայսրությանը 387 թ. բաժանումից հետո անցած Մեծ Հայքի արևմտյան մասի կառավարիչները կոչվում էին կոմեսներ:
2. Կիլիկյան Հայաստանում ձիավարությունից, նետաձգությունից, նիզակի ու սրի գործածությունից և այլ գիտելիքներից ու հմտություններից քննություն հանձնելով ստացած զինվորական աստիճանը կոչվում էր կապիտան:
3. Կիլիկյան Հայաստանում արքունի քարտուղարության գլխավոր պաշտոնյան կոչվում էր կանցլեր:
4. Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգները հայտնի են նաև բուն Աղվանք անունով:
5. Բարձրագույն դատական ատյանը մաս էր կազմում Կիլիկիայի հայոց պետության կառավարման գլխավոր մարմնի, որը կոչվում էր արքունիք:
6. Կարա-կոյունլուների առաջնորդները իրենց ներկայացնում էին որպես Շահ-ի Արման, որը նշանակում էր Հայաստանի թագավոր:
7. Կիլիկիայի հայկական պետությունը խաչակիր մատենագիրներն անվանել են «Հայաստան» և «Կիլիկյան Հայաստան»:
8. Հայաստանի հարավում՝ Խլաթ կենտրոնով ստեղծված մահմեդական իշխանությունը կոչվում էր Շահ–Արմենների աթաբեկություն:
9. Կիլիկյան Հայաստանում սպարապետի անմիջական տեղակալը կոչվում էր մարաջախտ, որը զբաղվում էր բանակի սպառազինությամբ և պարենի մատակարարմամբ:

59 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները:**

1. Արևելահայերի ներկայացուցչական համաժողովի՝ Հայոց ազգային համախորհրդակցության որոշմամբ ձևավորված օրենսդիր մարմինը կոչվել է Ազգային ժողով:
2. Խորհրդային Հայաստանում ամենազանգվածային կազմակերպությունը կոչվում էր երիտասարդական կոմունիստական միություն, որի գործունեությունը կենտրոնացնում էր ՀԱՄԽ-ը:
3. Զանգեզուրի հայոց ազգային խորհուրդը 1919 թ. սկզբին վերակազմվեց և կոչվեց Զանգեզուր–Ղարաբաղի մարզային խորհուրդ:
4. Ռուսական բանակի գերագույն սպայակույտի 1917 թ. նոյեմբերի 16–ի հրամանով Կովկասյան ճակատում կազմավորվող հայկական զորամիավորը կոչվում էր Երկրապահ դիվիզիա:
5. Հայաստանի Հանրապետությունում 1919-1920 թթ. քաղաքներում և գավառներում ներդրված համայնքային ինքնավարությունները կոչվում էին զեմստվոներ, որոնք ընտրովի մարմիններ էին:
6. Փետրվարյան ապստամբության հաղթանակից հետո Երևանում ստեղծված իշխանության մարմինը կոչվեց Հայաստանի փրկության կոմիտե:
7. Լենինի մահից հետո Լ. Տրոցկու, այնուհետև նրան միացած Գ. Զինովևի և Ս. Կիրովի գլխավորությամբ հանդես եկած ընդդիմությունը հայտնի է տրոցկիստական անունով:
8. Հայաստանում խորհրդային կարգեր «ներդնելու» նպատակով 1920 թ. դեկտեմբերի 6–ի դեկրետով հիմնված մարմինը կոչվում էր Արտակարգ հանձնաժողով (Չեկա):

60 **Թվարկվածներից որո՞նք են սխալ արտահայտում պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերը:**

1. Արտավազդ II–ի և Կրասոսի ռազմական ուժերի միավորումը թույլ չտալու նպատակով պարթևական զորքը հարձակվեց Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա:
2. Ք. ա. XIV դարում Խեթական պետության և Հայասայի միջև կնքվում է բարեկամության և փոխօգնության պայմանագիր, որն ամրապնդելու նպատակով խեթերի թագավորն իր քրոջը կնության է տալիս Հայասայի արքա Կարանիին:
3. Տիգրան III–ից հետո, առանց Հռոմի համաձայնության, գահ բարձրացած Տիգրան IV–ը թագավորեց որպես անկախ և ինքնիշխան միապետ:
4. Սելևկյան պետության դիրքերը թուլացնելու նպատակով Արտաշես I–ը աջակցեց Մարաստանի սատրապ Տիմարքոսի Ք.ա. 165-162 թթ. ապստամբությանը:
5. Վանի թագավորությունում ստրուկների թվաքանակը հիմնականում ավելանում էր բնական ճանապարհով, ինչպես նաև պարտքի դիմաց ստրկացման եղանակով:
6. Ռազմական ոլորտում սկսած բարեփոխումների շնորհիվ Իշպուինին Ք. ա. 820–ական թթ. վերջին ընդլայնեց Վանի թագավորության սահմանները Ուրմիա լճի ավազանի հարավում՝ ներառելով Արդինի–Մուսասիր երկիրը:
7. Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների արդյունքում Առաջավոր Ասիայում սկսվեց հելլենիզմի՝ հռոմեականության դարաշրջանը:

61 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառահետևանքային կապեր:**

1. Սասունի 1894 թ. դեպքերը հետաքննող հանձնաժողովի եզրակացությունը չունեցավ գործնական հետևանք, որովհետև մեղավորները մնացին անպատիժ:
2. Հնչակյան կուսակցությունը պառակտվեց երկու թևի, որովհետև կուսակցության մեծամասնությունը կարևոր խնդիր էր համարում սոցիալական ազատագրությունը և սոցիալիզմի համար պայքարը:
3. Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան առաջ քաշեցին Մայիսյան բարենորոգումների ծրագիրը բացառապես հայ ժողովրդի շահերը պաշտպանելու նպատակով:
4. ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովը կուսակցության կազմակերպական ձև ընտրեց ապակենտրոն սկզբունքը, քանի որ հայ ժողովուրդն իր հայրենիքում գտնվում էր տարբեր երկրների տիրապետության տակ և սփռված էր աշխարհով մեկ:
5. Հայերի ընդհանուր ապստամբությունը նախատեսված էր սկսել 1905 թ. ամռանը, սակայն թուրքական իշխանությունների նախահարձակ լինելու պայմաններում հայերը 1904 թ. գարնանը ապստամբեցին Սասունում:
6. Ա.Մանդելշտամի կազմած հայկական բարենորոգումների նախագիծը չընդունվեց, որովհետև այն հավանություն չստացավ Ռուսաստանի դաշնակից երկրների դեսպանների կողմից:
7. Փետրվարյան հեղափոխության օրերին ցարիզմը հեղափոխական ուժերը մասնատելու նպատակով Անդրկովկասում հրահրեց ազգամիջյան բախումներ:
8. Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ 1914 թ. ռուս–թուրքական համաձայնագրի չիրագործվելու պատճառներից էր Բալկանյան երկրորդ պատերազմի սկսվելը:

62 Տրված պնդումներից որո՞նք են սխալ։

1. XVII դ. սկզբին օսմանյան արքունիքում սկսվել էին երկպառակություններ, գահակալական պայքար, երկրում ծավալվում էին գյուղացիական ու զինվորական ապստամբություններ։
2. Հայ–մոնղոլական 1254 թ. հաստատված պայմանագրի համաձայն՝ կողմերը պարտավորվում էին պատերազմների ժամանակ օգնել միմյանց։
3. Մառիի ճակատամարտում կրած պարտությունը և Անտիոքի 1268 թ. անկումը վերջ դրեցին Հեթում II–ի՝ քրիստոնեա–մոնղոլական դաշինք ստեղծելու ծրագրին։
4. Հայ–մոնղոլական պայմանագրի համաձայն՝ հայոց եկեղեցիներն ու վանքերը ազատվում էին հարկերից։
5. Հայերի բռնագաղթի միջոցով որակյալ արհեստավորներ ու երկրագործներ փոխադրելով ու բնակեցնելով Իրանի ներքին շրջաններում՝ շահ Աբասը նպատակ ուներ զարկ տալու իր երկրի տնտեսության զարգացմանը։
6. Շահ Աբասը ֆրանսիական սպաների ու վարպետների օգնությամբ վերակազմեց ու վերազինեց պարսկական բանակը։
7. 1603 թ. շահ Աբասի բանակը, անցնելով Արաքսը, մտավ Նոր Ջուղա, ապա գրավեց Նախիջևանը և պաշարեց Երևանի բերդը։
8. Հայ բնակչության բռնի տեղահանությունը սկսվեց 1604 թ. օգոստոսին։
9. 1606 թ. վճռական ճակատամարտում պարտություն կրելով պարսիկներից՝ օսմանյան կողմը համաձայնեց հաշտության պայմանագրի ստորագրմանը, որով վերահաստատվում էր 1590 թ. կնքված հաշտությամբ նախատեսված սահմանագիծը։

63 Ընտրե՛ք սխալ պնդումները։

1. Ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմի Կովկասյան ճակատում ռուսների հիմնական հարվածող ուժը հայազգի գեներալ Միխայիլ Լոռիս–Մելիքովի հրամանատարությամբ գործող 70–հազարանոց Կովկասյան կորպուսն էր։
2. Գեներալ Արշակ Տեր-Ղուկասովի Երևանյան ջոկատը 1877 թ. ապրիլի 30–ին գրավել է Բայազետը, այնուհետև՝ Դիադինն ու Ալաշկերտը։
3. 1878 թ. սկզբին ռուսական զորքերը մտել են Սոֆիա, ապա՝ Պլովդիվ և հասել Բուխարեստի մատույցները։
4. Աղաբաբյան դպրոցը հատկապես մեծ ճանաչում է ձեռք բերել իր հիմնադրումից մեկ տասնամյակ անց՝ Սերովբե Պատկանյանի տեսուչ եղած ժամանակ։
5. Կ. Պոլսում 1861 թ. կազմվել է առաջին մշտական թատերական խումբը՝ Պետրոս Մաղաքյանի ղեկավարությամբ։
6. Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը կնքվել է 1878 թ. փետրվարի 19-ին հայ մեծահարուստ Առաքել Դադյանի ամառանոցում։
7. Հայկական հարցի շուրջ ստեղծված միջազգային անբարենպաստ իրադրության պայմաններում հայ պահպանողական հասարակական հոսանքը 1880-ական թվականների կեսերից վերելք է ապրել։

64 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ։**

1. Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի ընտրություններին մասնակցելու իրավունք ունեին 20 տարին լրացած ՀՀ քաղաքացիները՝ առանց սեռի, ազգության և կրոնական խտրականության, ընդհանուր, գաղտնի, հավասար և ուղղակի քվեարկությամբ։
2. Հայաստանի առաջին հանրապետությունում ուսուցչական կադրեր պատրաստելու համար 1918 թ. սեպտեմբերին բացվել է ուսուցչական սեմինարիա։
3. Մարաշի 1920 թ. ինքնապաշտպանության բարձրագույն խորհրդի նախագահն էր Պետրոս Սարաճյանը, պաշտպանության ուժերի հրամանատարը՝ Սարգիս Ճեպեճյանը։
4. Քաղաքական–իրավական տեսանկյունից Հայոց ցեղասպանության ճանաչման և դրա համար պատժելու առաջին լուրջ քայլը կատարել է թուրքական կառավարությունը 1919 թվականին։
5. Ազգերի լիգայի կողմից հայերի համար «ազգային օջախ» ստեղծելու մասին 1922 թ. ընդունած որոշումով միջազգայնորեն ճանաչվել է Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքը։
6. Ի տարբերություն Մոսկվայի 1921 թ. պայմանագրի, որով Նախիջևանի մարզի նկատմամբ խնամակալությունը Ադրբեջանը իրավունք չուներ զիջելու «մի երրորդ պետության», Կարսի պայմանագրում այդ պայմանը չկար։
7. ԽՍՀՄ–ում հնգամյակներով կենտրոնացված պլանավորումը սկսել է կիրառվել 1925 թվականից։
8. Ընդհանուր առմամբ՝ Խորհրդային Հայաստանից 1949 թվականին հիմնականում Ալթայի երկրամաս աքսորվել է մոտ 15 500 հայ։
9. ԽՍՀՄ հերոս, օդաչու Սերգեյ Բուռնազյանը իրականացրել է 224 մարտական թռիչք և կործանել թշնամու 22 ինքնաթիռ։

65 **Գտե՛ք այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական ճիշտ հաջորդականությունը։**

1. հռոմեա–պոնտական պատերազմների սկիզբը
2. Օսրոյենեի, Ադիաբենեի և Միգդոնիայի միացումը Հայկական տերությանը
3. Սուլլայի բանակի մուտքը Կապադովկիա
4. Պտղոմայիս քաղաքի գրավումը Տիգրան Մեծի բանակի կողմից
5. հայ–հռոմեական պատերազմի առաջին փուլի սկիզբը
6. Հրահատ III–ի ներխուժումը Հայաստան և Արտաշատի պաշարումը
7. Միհրդատ Եվպատորի մահը
8. Տիգրան Մեծի ժամանումը Պոմպեոսի ճամբար
9. Տիգրան Կրտսերի ձերբակալումը և ընտանիքի հետ գերեվարումը Հռոմ

66 **Վարդանանց ապստամբության շրջանի տրված իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1. «Հավատո ուխտի» կնքումը Վասակ Սյունու, տանուտերերի և ավագ սեպուհների մատանիներով
2. Վարդան Մամիկոնյանի՝ դեսպան ուղարկելը հոների մոտ և նրանց հետ դաշինք կնքելը
3. Անգղի եկեղեցին քանդելու փորձը պարսից զորքի և մոգերի կողմից
4. ապստամբների կողմից կառավարության կազմումը
5. Խաղխաղի ճակատամարտը
6. հայ նախարարների՝ քրիստոնեության առերես ուրացումը Տիզբոնում
7. գերի վերցված պարսից մոգերի մահապատիժը Ջարեհավանում

67 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1. Լոզանի կոնֆերանսի սկիզբը
2. Հայհեղկոմի վերակազմավորվելը ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի
3. Միջագետքից հայ գաղթականների առաջին խմբի տեղափոխվելը Բաթում
4. Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը Բաքվում
5. «Լեռնահայաստանի» հռչակումը
6. Լենինի առաջարկի հիման վրա՝ խորհրդային հանրապետությունները նոր պետականության մեջ միավորելու վերաբերյալ նախագծի ընդունումը
7. Խորհրդային Հայաստանում պարենային հարկ մտցնելը

68 **Կատարե՛ք համապատասխանեցում:**

Մասնագիտություն

Ա. մաթեմատիկոս	Ե. քիմիկոս
Բ. ճարտարապետ	Զ. դերասան
Գ. կոմպոզիտոր	Է. երկրաբան
Դ. երգիչ	

Ներկայացուցիչ

1. Լևոն Ռոտինյան
2. Հարություն Կալենց
3. Ֆրանց Լևինսոն-Լեսինգ
4. Արտաշես Շահինյան
5. Հայկանուշ Դանիելյան
6. Ալեքսանդր Հարությունյան
7. Մետաքսյա Սիմոնյան
8. Միքայել Մազմանյան

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

69 **Կատարե՛ք համապատասխանեցում:**

Հայաստանի ո՞ր գավառներում են տեղի ունեցել թվարկված իրադարձությունները:

Ա. Գրիգոր Լուսավորչի առանձնանալը աշխարհիկ կյանքից և ճգնավորի կյանքով ապրելը
Բ. պարսից գնդի ջախջախվելը հայ ապստամբների կողմից Արծաթի գյուղի մոտ
Գ. Ձիրավի ճակատամարտը
Դ. մարզպան Ատրվշնասպի բանակելը Անի ամրոցի մոտ
Ե. Հայ եկեղեցու առաջին ժողովի գումարումը
Զ. Թեոդորոս Ռշտունու գլխավորած հայոց զորքի օգնության հասնելը Արծափ ամրոցին
Է. Ոսխայի ճակատամարտը և պարսից զորքերի ջախջախումը

1. Հեր
2. Շիրակ
3. Բասեն
4. Կոգովիտ
5. Բագրևանդ
6. Դարանաղյաց
7. Կարնո
8. Տարոն

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

70 **Տրված վեց պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:**

1. Խորհրդային Ռուսաստանը Բրեստ-Լիտովսկում ընթացած բանակցություններում պարտավորվեց իր զորքերը դուրս բերել Ավստրո-Հունգարիայի, Օսմանյան կայսրության և Իրանի տարածքներից:
2. 1918 թ. ապրիլի 6-8-ը Երևանում կայացած հայ ազգային-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցության մեծամասնությունը հանդես է եկել Անդրկովկասն անկախ հռչակելու թուրքական պահանջի դեմ:
3. Կովկասյան ճակատի հայկական հատվածի պաշտպանական դիրքերում 1918 թ. սկզբի դրությամբ մնացել էր ընդամենը 17 հազար զինվորական:
4. Տրապիզոնի թուրք–անդրկովկասյան բանակցություններն ավարտվել են 1918 թ. ապրիլի 1-ին՝ մեկամսյա զինադադարի կնքմամբ:
5. Բրեստ–Լիտովսկի հաշտության պայմանագրի 15–րդ հոդվածով և ռուս–թուրքական լրացուցիչ պայմանագրի համաձայն՝ օսմանյան Թուրքիային են անցել Արևմտյան Հայաստանի ազատագրված մարզերը:
6. Թուրքական զորքերի հարձակումը դեպի Բաքու սկսվել է 1918 թ. հունիսին, սակայն հոկտեմբերին միայն նրանց հաջողվեց մտնել քաղաք: